Հայրը վարում էր դրամների տպագրութեան գործը, ինքը, պատանի հոգու ամբողջ եռանդով, նվիրվել էր «հայկական նաւատորմիղի» ստեղծագործման։ Քաղաքականութեամբ չէր հետաքրքրվում, բայց, Հայաստանի խորհրդայնացումից յետոյ անմիջապէս, դարձաւ քաղաքական առաջին զոհը։

Ցուլիսին կառավարութիւնը հաստատեց ակադ. Ալ. Թամանեանի կազմած և նկարիչ Կոջոյեանի գծած Հայաստանի պետական զինանշանի (դերբի) նախագիծը։ Զինանշանի կենտրոնում կար վահանաձև մի տարա-

ծութիւն՝ բաժանուած չորս մասի. իւրաքանչիւր մասում տեղաւորուած էր հին Հայաստանի չորս անկախ շրջաններից մէկի զինանշանը՝ Արտաշիսեան, Արշակունեան, Բագրատունեան, Ռուբինեան։ Մէջտեղը դրուած էին մեծ և փոքր Մասիսները և նրանց վերև՝ Հ. Հ. տառերը։ Վահանի աջ ու ձախ կողմերը բռնել էին մի արծիւ և մի առիւծ, իսկ ներքևը՝ սուր, գրիչ, հասկեր և շղթայ։

Այս զինանշանը լուրջ առարկութիւններ առաջ բերեց թէ կառավարութեան մէջ և թէ դուրսը։ Ոմանք դժգոհ էին, ընդհանրապէս, զինանշանի գաղափարից ու ոգուց. վերարտադրում էր հին, անցած դարերի գաղափարներ, չէր համապատասխանում նոր Հայաստանի պարզ, ռամկավար, յառաջադէմ ոգուն։ Ուրիշներ գտնում էին շատ ծանր, ահեղ, աշխարհակալական, միապետական ձգտումների արտայայտիչ։ Կային մարդիկ, որոնք նոյնիսկ պատմական ճշմարտութեան հակասող փաստեր էին գտնում զինանշանի մէջ, օրինակ, որ հայոց մէջ ընդունուած չի եղել երկգլխեան արծիւը, որ Տիգրան Մեծի թագի վրայի թռչունները եղել են աղաւնիներ և ոչ արծիւներ և այլն։ Եւ, վերջապէս, զինանշանը չէր զոհացնում մարդկանց գեղասիրական պահանջներին, իր մէջ պարունակում էր շատ կենդանիներ. «կատարեալ գազանանոց» սրախօսում էին ոմանք։